ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՆԹԻՆԳԹՈՆԻ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԻ» ՊՐՈՅԵԿՑԻԱՅԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

ԷՄԻԼ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ
ԵՊԼՀ UNESCO-ի ժողովրդավարության, մարդու իրավունքների և եվրոպագիտության ամբիոնի ավագ դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր՝ քաղաքական կարգ, արդիականացում, քաղաքական ինստիտուտներ, լեգիտիմություն, քաղաքական կուսակցություն, քաղաքական մասնակցություն, կոռուպցիա:

Արդի քաղաքական զարգացումները, որոնք տեղի են ունենում հետ-խորհրդային տրանսֆորմացիայի կամ արդիականացման պայմաններում, լի են բազմաթիվ դժվարություններով: Այդպիսի դժվարությունները, կապված ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման, դրանց պատշաճ գործառնության, մասնակցային քաղաքական մշակույթի ձևավորման և այլ գործընթացների հետ, գոյություն են ունեցել նաև ավելի վաղ շրջանում ժողովրդավարական զարգացման ուղին որդեգրած մի շարք այլ պետություններում: 1960-70-ական թթ. այս խնդրի ուսումնասիրությանը համակողմանիորեն անդրադարձել է ամերիկացի քաղաքագետ Սեմյուել Հանթինգթոնը, ով իր «Քաղաքական կարգը փոփոխվող հասարակություններում» աշխատության մեջ ցույց է տալիս անցումային գործընթացում առկա դժվարությունների պատճառները և առաջարկում դրանց հաղթահարման ուղիներ:

Սույն հոդվածում փորձ է արվել դիտարկել և բացատրել քաղաքական կարգը և արդիականացման դժվարությունները հետխորհրդային Հայաստանում Հանթինգթոնի՝ «քաղաքական կարգի» շրջանակներում, փորձելով նաև արժեվորել հանճարեղ քաղաքագետի վաստակը քաղաքագիտության զարգացման գործում: Առաջարկվել են նաև Հայաստանում արդիականացման դժվարությունների հաղթահարման որոշ ուղիներ:

Ճիշտ այնպես, ինչպես տնտեսական զարգացումը կախված է ինչ-որ չափով ներդրումների և սպառման միջև հարաբերակցությունից, այնպես էլ քաղաքական կարգը կախված է մասամբ քաղաքական

ինստիտուտների և քաղաքականության մեջ նոր սոցիալական ուժերի մոբիլիզացման միջև հարաբերակցությունից[1]:

Քաղաքական հարաբերություններում ամենակարևոր բանը, որը տարբերում է մի երկիրը մյուսից, ոչ թե կառավարման ձևն է, այլ կառավարելիության աստիճանը: Ժողովրդավարությունները և բռնապետությունները տարբերվում են միմյանցից ոչ պակաս, քան այն երկրները, որտեղ քաղաքական կյանքը բնութագրվում է համաձայնությամբ, հասարակական հարաբերությունների ամրությամբ, լեգիտիմությամբ, կազմակերպվածությամբ, արդյունավետությամբ, կայունությամբ՝ ի տարբերություն այն երկրների, որտեղ այդ ամենը բացակայում է: Ինչպես նշում է Հանթինգթոնը, և՛ կոմունիստական բռնապետական պետությունները, և՛ ազատական արևմտյան երկրները պատկանում են քաղաքական համակարգերի բարձր արդյունավետություն ունեցող երկրների թվին: Ամերիկայի Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան և Խորհրդային Միությունը ունեին տարբեր կառավարման ձևեր, սակայն բոլոր երեք երկրներում, կառավարությունը կառավարում էր: Նրանցից յուրաքանչյուրում առկա էր իշխանության նկատմամբ լեգիտիմության բարձր աստիճան[2]: Հետևապես՝ քաղաքական կարգի կայունության առաջին նախապայմանը կարելի է համարել իշխանության լեգիտիմությունը:

Ի տարբերություն վերը նշված պետությունների՝ աշխարհի մյուս՝ արդիականացող պետություններում, որտեղ սոցիալական կապերը թույլ են զարգացած, ցածր է գրագիտության, կրթության, եկամուտների, առողջապահության և կարևոր այլ գործոնների մակարդակը, քաղաքական կարգը չունի կայունության պատշաճ աստիճան: Այդպիսի պետություններում հասարակությունը քաղաքականապես տարանջատված է, քաղաքական ինստիտուտներն ունեն քիչ իշխանություն, ավելի քիչ հեղինակություն և չունեն ճկունություն[3]:

Հանթինգթոնը այդպիսի պետությունների թվին է դասում Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի և Ասիայի երկրները: Սակայն հարկ է նշել, որ այդ բնորոշումը հեղինակը տվել է 1960-70-ական թթ.,

---

[1] Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах, Прогресс-Традиция, Москва, 2004, с. 19.

[2] Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах, Прогресс-Традиция, Москва, 2004, с. 21.

[3] Хантингтон С. ..., с. 22.

որից հետո աշխարհում շատ բան է փոխվել, և նրա բնորոշմամբ արդիականացող երկրների մի մասն արդեն, իհարկե, հաղթահարել է այդ փուլը: Սակայն առավել կարևոր է ընդգծել այն իրողությունը, որ նրա բնորոշմամբ կայուն քաղաքական կարգ և լեգիտիմություն ունեցող երեք երկրներից ԽՍՀՄ-ը, այնուամենայնիվ, փլուզվեց, ինչը փաստում է երկրի ներսում քաղաքական կարգի, լեգիտիմության անկման և մի շարք այլ կարևոր գործոնների մասին: Սակայն Հանթինգթոնի այն տեսական գաղափարը, որ արդիականացող պետություններում քաղաքական կարգը դեռևս երկար և բազմաթիվ խոչընդոտներ պետք է հաղթահարի, մինչև դառնա կայուն, պահպանեց իր հիմնավորվածությունը: Ուստի՝ հետխորհրդային տարածքում ձևավորված նորանկախ պետությունները չէին կարող միանգամայն ժառանգել ԽՍՀՄ քաղաքական կարգի կայունությունը և ավելի արագ հաղթահարեին արդիականացման կամ մի շարք հեղինակների[4] բնորոշմամբ՝ տրանսֆորմացիայի, ժողովրդավարացման գործընթացները: Սակայն մեր խնդիրը հետխորհրդային տրանսֆորմացիային բնորոշում տալը չէ, այլ այդ տիրույթում Հայաստանում քաղաքական կարգի ձևավորման գործընթացում առկա երևույթների դիտարկումն է՝ Հանթինգթոնի քաղաքական կարգի տեսության շրջանակներում: Ի սկզբանե նկատենք, որ նրա՝ քաղաքական կարգի տեսությունը, չնայած, որ առաջարկվել է 1960-ականներին, մինչ օրս պահպանել է իր արդիականությունը, քանի որ ներկայումս արդիականացման գործընթացները, կարելի է ասել, կրկին ընթանում են նրա մշակած տեսության հետ խիստ ընդհանրություններով, ինչը խոսում է Հանթինգթոնի՝ «քաղաքական կարգի» տեսության ունիվերսալության մասին:

Արդիականացող երկրներում առկա անկայունությունը Հանթինգթոնը բնորոշում է հետևյալ սկզբունքով՝ արդիականացող

---

[4] Տե՛ս Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, «Գիտություն», Երևան, 2006, 424 էջ: Погосян Г. Армянское общество в трансформации, Лусабац, Ереван, 2003, 460 с., Рыбаковский Л. Трансформация миграционных процессов на постсоветском пространстве, Институт социально-политических исследований (Российская академия наук) Академия, Москва, 2009, 431 с., Булуктаев Ю. Политический режим и посткоммунистическая трансформация: теория, методология, практика, Ин-т мировой экономики и политики при Фонде Первого Президента Республики Казахстан, 2008, 383 с., Lane D. Elites and Classes in the Transformation of State Socialism, New Jersey, 2011, 220 p., Moses J. Dilemmas of Transition in Post-Soviet Countries, Burnham Inc. Publisher, 2003, 174 p. և այլք:

հասարակություններում սոցիալական փոփոխությունները տեղի են ունենում շատ ավելի արագ, նոր խմբերն ավելի արագ են հավաքագրվում քաղաքականության մեջ, քան տեղի է ունենում քաղաքական ինստիտուտների զարգացումը[5]: Ինչպես գրում է Ա. Թոքվիլը. «Հասարակական կյանքը կարգավորող օրենքների մեջ կա մեկը, որն ավելի պարզ է, քան մյուսները: Եթե մարդիկ ուզում են մնալ քաղաքակիրթ կամ դառնալ այդպիսին, ապա համատեղ կյանքի արվեստը պետք է աճի և կատարելագործվի քաղաքական հավասարության աճին համամասնորեն»[6]:

Սոցիալական և տնտեսական փոփոխությունները, ուրբանիզացիան, գրագիտության և կրթության տարածումը, արդյունաբերականացումը, զանգվածային հաղորդակցության միջոցների տարածումը և այլ գործոններ, ընդլայնում են քաղաքական գիտակցության հորիզոնը, կրկնապատկում քաղաքական պահանջները, ավելացնում քաղաքական կյանքի մասնակիցների թիվը: Այս փոփոխությունները քայքայում են քաղաքական հեղինակության ավանդական աղբյուրները, զգալիորեն բարդացնում են քաղաքական միասնականության և նոր քաղաքական ինստիտուտների համար հիմքերի ձևավորման խնդիրները, որոնք միավորում են իրենց մեջ լեգիտիմությունը և արդյունավետությունը: Բնակչության սոցիալական հավաքագրման և քաղաքական ակտիվության տեմպերը բարձր են, իսկ քաղաքական ինստիտուտների կազմակերպման և ինստիտուցիոնալացման տեմպերը՝ ցածր: Այս ամենի արդյունքը, Հանթինգթոնի բնորոշմամբ, քաղաքական անկայունությունն է և անկարգությունը: Քաղաքականության և քաղաքական կարգի գլխավոր խնդիրը քաղաքական ինստիտուտների զարգացման տեմպերի դանդաղությունն է՝ ի համեմատ սոցիալական և տնտեսական փոփոխությունների[7]:

ԱՄՆ օրինակով Հանթինգթոնը նշում է, որ քաղաքական կայունությունը նախ տնտեսական զարգացման, ապա սոցիալական բարեփոխումների բնական և անխուսափելի հետևանքն է[8]: Եթե այս

---

[5]Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах, Прогресс-Традиция, Москва, 2004, с. 24.

[6]Tocqueville A. Democracy in America (ed. Phillips Bradley, New York, Knopf, 1955), 2,118.

[7] Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах, Прогресс-Традиция, Москва, 2004, с. 25.

[8] Хантингтон С. ..., с. 25.

զաղափարը դիտենք ՀՀ օրինակով, ապա պարզ է դառնում մեր երկրում առկա քաղաքական անկայունության պատճառը: Այն է՝ առանց տնտեսական զարգացման՝ կառավարությունը հաճախ փորձում է պարտադրել սոցիալական բարեփոխումներ, ինչը բացասաբար է ընկալվում քաղաքացիների կողմից, և չունի արդյունավետության հեռանկար: Ասվածի ապացույցը կենսաթոշակային բարեփոխման դեմ քաղաքացիների իրավական պայքարն է, որը հանգեցնում է քաղաքական անկայունության, քանի որ կոնֆլիկտի երկու կողմերն էլ չեն փորձում նահանջել: Կառավարությունը հետագայում «բարելավում է» սույն օրենքը, սակայն ոչ ամբողջապես, քանի որ այն քաղաքացիները, ովքեր ցանկանում են հրաժարվել «պարտադիր» բաղադրիչից, պետք է համապատասխան դիմում ներկայացնեն գործատուին, ինչը կաշկանդում է աշխատողին, քանի որ կա աշխատանքից ազատվելու մտավախություն: Իսկ այս երևույթը փաստում է քաղաքական թերի կարգի և այն մասին, որ ՀՀ-ն դեռ երկար ճանապարհ ունի անցնելու քաղաքական կարգի ձևավորման և ամրապնդման գործում:

Հարկ է նաև նշել, որ Հանթինգթոնի բնորոշմամբ սոցիալական բարեփոխումը նյութական և հոգևոր ռեսուրսների առավել արդարացի բաշխումն է[9], ինչը չի նկատվում մեր կառավարության առաջարկած բարեփոխումներում: Ուստի՝ հարկ է պնդել, որ այս դեպքում քաղաքացիների պահանջներն իրավական են և հիմնավորված:

Նորից վկայակոչելով ԱՄՆ օրինակը՝ Հանթինգթոնը նշում է, որ ամերիկյան պատմական փորձում բացակայում է քաղաքական կարգի հաստատման անհրաժեշտությունը, քանի որ Թոքվիլի պնդմամբ՝ ամերիկացիները ծնվում են հավասար, ուստի՝ երբեք չեն մտահոգվում հավասարության խնդրով: ԱՄՆ փոխառել է 17-րդ դարի Անգլիայի կառավարման համակարգը, քաղաքական ինստիտուտները և քաղաքական պրակտիկան, այդ իսկ պատճառով ամերիկացիները երբեք չեն մտահոգվել հանրային իշխանության համակարգի մշակման խնդրով: Երբ ամերիկացիները մտածում են պետականաշինության մասին, նրանք ոչ թե ցանկանում են ստեղծել կառավարման մարմիններ և ամրապնդել իշխանությունը, այլ փորձում են սահմանափակել և բաժանել այն: Ամերիկացու համար պետությունը իշխանությունը սահմանափակելու

[9] Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах, Прогресс-Традиция, Москва, 2004, с. 26.

միջոց է: Հետևապես՝ պետական համակարգը պետք է հիմնվի ազատ և արդար ընտրությունների վրա[10]:

Բազմաթիվ արդիականացող պետություններում, այդ թվում՝ նաև Հայաստանում, այս բանաձևը մասամբ չի աշխատում: Որպեսզի ընտրություններն իմաստ ունենան, անհրաժեշտ է քաղաքական կազմակերպման որոշակի մակարդակ:

Հանթինգթոնի բնորոշմամբ կարգը կարող է գոյություն ունենալ առանց ազատության, սակայն ազատությունն անհնարին է առանց կարգի [11]:

Հանթինգթոնի բնորոշմամբ՝ արդիականացումը զգալիորեն կապված է հասարակության մեջ առկա սոցիալական ուժերի բազմապատկման և դիվերսիֆիկացման հետ: Սոցիալական ուժերը էթնիկական, կրոնական, տարածքային կամ տնտեսական խմբերն են: Բացի ցեղային, ռասայական, կրոնական ընդհանրություններից, առաջանում են նաև մասնագիտական, դասային և կրթական հիմքերի վրա ձևավորված խմբեր: Իր հերթին՝ քաղաքական կազմակերպումը կարգի հաստատման, վեճերի լուծման, հեղինակավոր լիդերների առաջադրման գործընթաց է, որի նպատակը այս կամ այն սոցիալական ուժերի միջև ընդհանրության հաստատումն է[12]: Այս տեսանկյունից՝ Հայաստանը կարելի է դիտարկել արդիականացման գործընթացն ավելի արագ հաղթահարելու ունակություն ունեցող պետություն, քանի որ սոցիալական ուժերի տարասեռությունը, ի դեմս՝ կրոնական, էթնիկական, ռասայական տարբերությունների, գրեթե աննշան է: Սա նշանակում է, որ Հայաստանում քաղաքական կարգի հաստատման և արդյունավետության ներուժը տեսականորեն ավելի մեծ է, քան հետ-խորհրդային մյուս պետություններում, որտեղ սոցիալական ուժերի միջև կրոնական, ռասայական և էթնիկական տարբերություններն ավելի ընդգծված են: Սակայն այս դեպքում ծագում է մի հարց՝ իսկ ինչո՞ւ այս 24 տարվա ընթացքում Հայաստանին չի հաջողվում հաղթահարել արդիականացման որևէ փուլ:

---

[10] Хантингтон С. ..., с. 27.

[11] Хантингтон С. ..., с. 27.

[12] Хантингтон С. ..., с. 28.

* ***Նեպոտիզմ՝*** քաղաքական իշխանության ձևավորումն ու իրականացումը՝ հիմնված արյունակցական, ընկերային կապերի վրա՝ առանց հաշվի առնելու մասնագիտական արժանիքները:

Այս հարցին պատասխանելու համար հարկ է վերհանել մի կարևոր խնդիր, որն արդեն բնորոշ է կրոնական, էթնիկական, ռասայական և տարածքային տարասեռություններ չունեցող պետություններին: Խոսքը ***նեպոտիստական կապերի**** (ընդգծումը.- Է. Օրդուխանյան) մասին է: Այս տիպի հասարակություններում սերտ նեպոտիստական կապերը թույլ չեն տալիս, որպեսզի տեղի ունենա առաջանցիկ զարգացում երկրի որևէ ոլորտում: Հետևապես՝ Հայաստանում արդիականացման ներուժը, որի տեսական հիմքերը բխում են Հանթինգթոնի արդիականացման բնորոշումից, պրակտիկ կյանքի չեն կոչվում այն պարզ պատճառով, որ մեր իրականության մեջ նեպոտիզմը դարձել է քաղաքական համակարգի ձևավորման և գործառնության կարևոր օղակ, որը ոչ միայն թույլ չի տալիս եզրափակիչ փուլ մտցնել արդիականացման գործընթացը, այլև ավելի է հեռացնում արդյունավետ քաղաքական կարգ ձևավորելու հեռանկարը: Հետևապես՝ կարելի է պնդել, որ նեպոտիստական ամուր կապերով ձևավորված քաղաքական իշխանություն ունեցող պետություններում քաղաքական արդիականացման և քաղաքական կարգի կայունացման խնդիրը դառնում է դժվար հաղթահարելի:

Քաղաքական կարգի արդյունավետ գործառնության համար Հանթինգթոնը կարևորում է նաև ինստիտուցիոնալացումը, որը մի գործընթաց է, որի միջոցով կազմակերպությունները ձեռք են բերում արժեք և կայունություն: Որևէ քաղաքական համակարգի ինստիտուցիոնալացումը որոշվում է նրա կազմակերպությունների և գործողությունների հարմարվողունակությամբ (ադապտացվելու ունակությամբ), բարդությամբ, ինքնավարությամբ և համաձայնեցվածությամբ[13]:

Հարմարվողունակությունը կազմակերպության ձեռքբերովի բնութագիրն է: Այն շրջակա միջավայրի կողմից ճնշման և կազմակերպության «տարիքի» գործառույթն է: Որքան շատ պահանջներ է ներկայացնում շրջակա միջավայրը և որքան «տարիքով» է կազմակերպությունը, այնքան ավելի է այն հարմարվողունակ[14]:

---

[13] Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах, Прогресс-Традиция, Москва, 2004, с. 32.

[14] Хантингтон С. ..., с. 32.

Այսպիսով՝ քաղաքական ինստիտուտները չեն ձևավորվում մեկ օրում: Այս առումով քաղաքական զարգացումը դանդաղ գործընթաց է, առավել ևս, եթե համեմատենք տնտեսական զարգացման դինամիկայի հետ: Ինչպես նշում է Հանթինգթոնը. «Որոշ դեպքերում փորձի որոշակի ձևերը կարող են ազդեցություն գործել, որը համեմատելի է ժամանակի ազդեցության հետ: Սուր կոնֆլիկտը կամ այլ լուրջ փորձություն կարող են ավելի արագ կազմակերպությունը վերածել ինստիտուտի, քան բնականոն ընթացքի ժամանակ»[15]: Այս գաղափարը որոշակի աղերսներ կարող է ունենալ Արցախի պետության կայացման հարցի հետ, քանի որ սուր կոնֆլիկտի արդյունքում ձևավորվել և այսօր դե ֆակտո գործում է Արցախի Հանրապետությունը իր քաղաքական բոլոր ինստիտուտներով: Կոնֆլիկտային վիճակը ստիպեց, որպեսզի կարճ ժամանակում ձևավորվեն պետությանը հատուկ բոլոր կազմակերպությունները, սակայն Արցախի դեպքում դեռ վաղ է խոսել այդ կազմակերպությունների ինստիտուցիոնալացվածության մասին:

Որքան հաճախ է կազմակերպությունը լուծում իշխանության խաղաղ փոխանցման հարցը՝ մի խումբ մարդկանց ձեռքից մյուսներին, որքան հաճախ են փոփոխվում իշխանության ղեկավարները, այդքան մեծ է տվյալ ինստիտուտի ինստիտուցիոնալացման աստիճանը[16]: Եթե Հանթինգթոնի այս գաղափարը դիտարկենք ՀՀ ընտրական ինստիտուտի գործառնության դաշտում, ապա միանգամայն պարզ է դառնում իշխանության փոխանցման գործընթացում մշտապես նկատվող կոնֆլիկտային դրսևորումների ազդեցությունը քաղաքական իշխանության լեգիտիմության խնդրի վրա, հետևաբար՝ նաև տեսական հիմքերից բացատրելի է դառնում քաղաքական կարգի անկայունության «հարատևությունը» Հայաստանում:

Հանթինգթոնը իրավացիորեն նշում է, որ ինստիտուցիոնալացման ցածր մակարդակ ունեցող կառավարությունը ոչ միայն թույլ, այլև վատ կառավարություն է: Կառավարության գործառույթը կառավարելն է: Հեղինակություն չունեցող թույլ կառավարությունը ունակ չէ իրականացնել իր այդ գործառույթը և անբարոյական է այնպես, ինչպես կաշառակեր դատավորը, վախկոտ զինվորը կամ տգետ ուսուցիչը:

---

[15] Хантингтон С. ..., с. 33.

[16] Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах, Прогресс-Традиция, Москва, 2004, с. 34.

Քաղաքական ինստիտուտների բարոյական հիմքերը պետք է բխեն մարդկանց պահանջներից[17]: Հետևապես՝ կարելի է պնդել, որ քաղաքացիների կողմից կառավարությանն ուղղված բարոյական տարբեր պահանջների չկատարումը կարող է հանգեցնել այդ ինստիտուտի նկատմամբ վստահության և լեգիտիմության կտրուկ նվազման, ինչը կարող է ավելի խորացնել հասարակության և իշխանության միջև անջրպետը՝ հանգեցնելով սոցիալական կոնֆլիկտի սրման:

Պետական որոշ ինստիտուտների նկատմամբ ցածր վստահության մասին են վկայում ՀՍԱ-ի (Հայկական սոցիոլոգիական ասոցիացիա) կողմից 2011թ. անցկացված հետազոտության արդյունքները, որոնց համաձայն՝ ըստ 10 բալանոց սանդղակի՝ պետության տարբեր մարմինների նկատմամբ քաղաքացիների վերաբերմունքը եղել է այսպիսին. բանակ՝ 7.21, եկեղեցի՝ 7.17, նախագահ՝ 6.48, կառավարություն 6.10: Ամենացածր վստահության մակարդակը ստացել են արհմիությունները՝ 5.12, քաղաքական կուսակցություններ՝ 5.22:[18] Նշենք, որ վերջին շրջանում կառավարության նկատմամբ վստահությունը կտրուկ նվազել էր, ինչը հանգեցրեց վարչապետի հրաժարականին և կառավարության լուծարմանը[19]: Իսկ նոր ձևավորված կառավարությունը, իհարկե, շատ անելիք ունի անվստահության մթնոլորտը մեղմելու համար:

Հանթինգթոնի պնդմամբ՝ քաղաքական այսպիսի մշակույթ ունեցող հասարակություններում հաճախ կարելի է նկատել կասկածամտություն, նախանձ, թաքնված կամ բացահայտ թշնամություն այն ամենի և ամենքի հանդեպ, ով ընտանիքի, համայնքի անդամ չէ[20]: Ասվածի գործնական օրինակներ կարելի է գտնել նաև հետխորհրդային տարածաշրջանի երկրներում, որտեղ շատ հաճախ տարբեր սոցիալական խմբեր կարող են դրսևորել իրենց քաղաքական

---

[17] Хантингтон С. ..., с. 46.

[18] Погосян Г. Социально-экономическое положение населения в Армении, Հասարակագիտական միտքը արդի ժամանակաշրջանում, Երևան, 2011, էջ 24:

[19] Վարչապետը հրաժարական է տվել, http://www.azatutyun.am/content/article/25320355.html, /15.04.2014/, ՀՀ կառավարությունը հրաժարական տվեց, http://armenpress.am/arm/news/714480/hh-karavarutyuny-hrazharakan-tvec.html, /15.04.2014/.

[20] Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах, Прогресс-Традиция, Москва, 2004, с. 47.

վարքում վերը նշված բնորոշումները: Օրինակ՝ վերջին շրջանում Ուկրաինայում ընթացող ներքին քաղաքական և սոցիալական գործընթացները միանշանակ փաստում են վերը նշված գաղափարի իսկությունը:

Ինչպես նշում է Հանթինգթոնը. «Այսպիսի դեպքերում բացակայում են կազմակերպվածությունը, համերաշխությունը, համախմբվածությունը: Մարդկանց հասարակական գիտակցությունը թույլ է: Պետության նկատմամբ հավատարմությունը ամուր չէ, և լիդերների հետ նույնականացումը թույլ է արտահայտված: Ավելին՝ գերակշռում է անվստահությունը նրանց նկատմամբ, ովքեր կառավարում են, և հասարակության մոտ բացակայում են նրանց գործունեության հետ կապված սպասումները»[21]: Վերջին շրջանում Ուկրաինայում տեղի ունեցող քաղաքական զարգացումները հիմնավորում են այս գաղափարը:

Փոխադարձ անվստահությունը և համերաշխության բացակայությունը բխում են կազմակերպվածության պակասից: Վարքագծի արտաքին նշանների տեսանկյունից, ինչպես նշում է Հանթինգթոնը, քաղաքականապես զարգացած հասարակությունը տարբերվում է չզարգացած հասարակությունից՝ գործող կազմակերպությունների թվի, հզորության և արդյունավետության տեսանկյունից: Ուստի՝ այս կարևոր գործոնի բացակայությունը կարելի է դիտել որպես քաղաքական կարգի անկայունության պատճառ, ինչն իր դրսևորումն ունի նաև մեր քաղաքական համակարգում: Քաղաքական կուսակցությունների կազմակերպվածության պակասը և ոչ արդյունավետ գործառնությունը լրջորեն խոչընդոտում են բազմակուսակցական համակարգի կայացումը[22], ինչը քաղաքական համակարգի արդյունավետ գործառնության կարևոր ինստիտուտներից մեկն է:

Արդիականացման գործընթացում Հանթինգթոնն առանձնակի կարևորություն է տալիս քաղաքական գիտակցությանը՝ առանձնացնելով արդիականացման մի քանի գործոն: Հետազոտողը նշում է, որ հոգեբանական մակարդակում արդիականացումը արժեքների, համակարգերի և սպասումների արմատական տեղաշարժ է: Ավանդական մարդը հույսը դնում էր բնության և հասարակության անփոփոխակա-

---

[21] Хантингтон С. ..., с. 47.

[22] Թորոսյան Տ. «Ցավոք սրտի, բազմակուսակցական համակարգը Հայաստանում դեռևս չկայացած՝ սկսեց այլասերվել», http://times.am/?l=am&p=16514, /27.12.2012/.

նության վրա և չէր հավատում դրանք փոխելու և կառավարելու իր ունակությանը[23]:

Մտավոր մակարդակում արդիականացում՝ նշանակում է շրջապատող աշխարհի մասին մարդու գիտելիքների հսկայածավալ ընդլայնում և այդ գիտելիքների տարածում գրագիտության աճի, զանգվածային հաղորդակցությունների և կրթության միջոցով:

Ժողովրդագրական տեսանկյունից արդիականացում՝ նշանակում է փոփոխություններ մարդու կենսակերպում. առողջության և կյանքի տևողության նկատելի աճ, մասնագիտական, աշխարհագրական մոբիլության աճ և հիմնականում քաղաքային բնակչության թվի աճ՝ ի համեմատ գյուղականի:

Սոցիալական տեսանկյունից արդիականացումը կապված է այն միտումի հետ, որ ի լրումն ընտանիքի և այլ առաջնային խմբերի, որոնք բնութագրվում են դերերի բաժանմամբ, առաջանում են նաև գիտակցաբար կազմակերպվող երկրորդային խմբեր ավելի որոշակի գործառույթներով: Խոսքը քաղաքական ինստիտուտների մասին է[24]:

Այս դեպքում Հանթինգթոնը իրավացիորեն նշում է, որ արդիականացում նշանակում է ազգային ինտեգրում և կենտրոնացում, այսինքն՝ իշխանության կենտրոնացում ճանաչված ազգային օրենսդիր ինստիտուտների ձեռքում:

Հետևաբար՝ քաղաքական արդիականացման առավել հիմնարար կողմը սոցիալական խմբերի համատարած մասնակցությունն է քաղաքականությանը, նոր քաղաքական ինստիտուտների զարգացումը, ինչպիսիք են քաղաքական կուսակցությունները, որոնք կոչված են կազմակերպել այդպիսի մասնակցությունը:

Բնութագրելով հետպատերազմյան պայմաններում ավանդական հասարակությունների անցումային կամ արդիականացման գործընթացները՝ Հանթինգթոնը նշում է, որ ԱՄՆ արտաքին քաղաքականությունն ուղղված է եղել արդիականացվող երկրներում տնտեսական և սոցիալական զարգացմանն աջակցելուն, քանի որ դա պետք է հանգեցներ քաղաքական կայունության այդ երկրներում: Սակայն այդ քաղաքականության ձեռքբերում կարելի է համարել ինչպես նյութական բարեկե-

---

[23] Хантингтон С. ..., с. 50.

[24] Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах, Прогресс-Традиция, Москва, 2004, с. 51.

ցության մակարդակի բարելավումը, այնպես էլ ներքին բռնության մակարդակի աճը: Որքան ակտիվ է մարդ պայքարում իր ավանդական թշնամիների դեմ՝ աղքատություն, հիվանդություն, տգիտություն, այնքան ավելի շատ է նա պայքարում հենց ինքն իր դեմ:[25]

Զարգացած և արդիականացման փուլում գտնվող պետությունների միջև կտրուկ տարբերությունը վեր է հանում այն թեզի ճշմարտացիությունը, ըստ որի՝ արդիականացվածությունը նշանակում է կայունություն, իսկ արդիականացումը անկայունություն[26]:

Այս տեսական մոտեցումը Հանթինգթոնը հիմնավորում է Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների օրինակներով, որոնք առանձնանում էին իրենց հատկապես բարձր քաղաքական անկայունությամբ, քանի որ այնտեղ արդիականացումը տեղի էր ունենում ավելի արագ տեմպերով, ի համեմատ այն երկրների, որտեղ նույն գործընթացը տեղի է ունեցել ավելի վաղ շրջանում:

Եթե այս տեսական մոտեցումը դիտարկենք այսօրվա քաղաքական զարգացումների տեսանկյունից, ապա կարելի է հիմնավորել հետխորհրդային տարածքի երկրներում արդիականացման գործընթացը, որն ուղեկցվում է բարձր քաղաքական անկայունությամբ: Այս մասին են փաստում գունավոր հեղափոխությունները, տարածաշրջանային հակամարտությունները, ինչպես նաև արդի զարգացումները Ուկրաինայում[27]:

Ինչպես նշում է Հանթինգթոնը, սոցիալական հավաքագրման և անկայունության միջև կապն ուղղակի է: Ուրբանիզացիան, գրագիտության աճը, կրթությունը և հաղորդակցության միջոցները նպաստում են սպասումների ավելացմանը, ինչը, չբավարարվելու դեպքում, քաղաքականապես ակտիվացնում է անհատներին և խմբերին[28]:

Ասվածի գործնական օրինակներ կարելի է գտնել նաև մեր հասարակության մեջ, առավել ևս վերջին շրջանում, երբ քաղաքացիների

---

[25] Хантингтон С. ..., с. 59.

[26] Хантингтон С. ..., с. 61.

[27] Hess S. Protests, Parties, and Presidential Succession; Competing Theories of Color Revolutions in Armenia and Krgyzstan, Problems of Post-Communism, vol. 57, no, 1, January/February 2010, pp. 28-39, Քաղաքական պայծառատես Բժեզինսկին և ուկրաինական զարգացումները, http://operativ.am/?p=62208/, /05.02.2014/.

[28] Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах, Прогресс-Традиция, Москва, 2004, с. 64.

սպասումների չբավարարումը հանգեցնում է նրանց ակտիվացմանը՝ ձևավորելով ավելի նպատակային քաղաքական վարքագիծ: Որպես օրինակ՝ կարելի է նշել Հայաստանում վերջին շրջանում բնապահպանական խնդիրներին ուղղված քաղաքացիական տարբեր նախաձեռնությունները (Թեղուտ, Թռչկան, Մաշտոցի պուրակ, Սևան և այլն), ինչպես նաև ավելի մասշտաբային քաղաքացիական անհնազանդությունը, որը ձևավորվեց պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման հետևանքով: Այսինքն՝ քաղաքացիների գրագիտության աճը, կրթության համապատասխան մակարդակը, քաղաքական գիտակցության պատշաճ մակարդակը և այդ ամենի հիման վրա ձևավորված իրավական պահանջները և սպասումները, որոնք չեն բավարարվում կառավարության կողմից, քաղաքացիներին ներգրավում են ավելի թեժ պայքարի մեջ: Քաղաքացիները դուրս են գալիս փողոց, իրականացնում են բողոքի տարբեր ակցիաներ, խստորեն քննադատում են խնդրի համար պատասխանատու պաշտոնյաներին՝ գործադրելով պայքարի թե՛ իրավական, թե՛ քաղաքական մեխանիզմներ: Արդյունքում՝ քաղաքական կարգի կայունության ապահովման կարևոր խնդիրը պետական մարմինների կողմից ոչ համարժեք արձագանքի պայմաններում շարունակում է մնալ չլուծված, խորացնում է հակասությունները հասարակության և իշխանության միջև և ստեղծում է բռնության կամ օտարման[29] իրական հիմքեր: Այստեղ պարզորոշ ի հայտ է գալիս այն օրինաչափությունը, որ արդիականացվածությունը ծնում է կայունություն, իսկ արդիականացումը՝ անկայություն:

Այս առիթով Հանթինգթոնը նշում է, որ որքան արագ է լուսավորվում հասարակությունը, այնքան հաճախակի են տապալվում կառավարությունները: Որքան բարձր է գործազուրկների և կյանքից դժգոհ մարդկանց ու օտարվածների կրթության մակարդակը, այնքան ավելի ծայրահեղ ձևեր է ընդունում նրանց ապակայունացնող վարքագիծը: Համալսարանների օտարված ուսանողները պատրաստում են հեղափոխություններ, տեխնիկումների և միջնակարգ դպրոցների օտարված շրջանավարտները ծրագրում են հեղաշրջումներ, իսկ տարրական

[29] Տե՛ս Հարությունյան Մ., Հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը, Նաիրի, Երևան, 2014, 648 էջ:

կրթություն ստացած օտարված մարդիկ մասնակցում են ավելի տարածված և պակաս նշանակալի քաղաքական բողոքի ձևերին:[30]

Հայաստանում ևս քաղաքական ակտիվիստները լուսավորված քաղաքացիներն են, ովքեր տեղեկացված են և գիտեն ինչպես ներկայացնել ու պաշտպանել իրենց շահերը և իրավունքները: Դրանով էլ պայմանավորվում են քաղաքացիական նախաձեռնությունների մասնակի հաջողությունները:

Տնտեսական զարգացման և անկայունության մասին խոսելիս Հանթինգթոնը նկատում է, որ սոցիալական հավաքագրումն ավելացնում է սպասումները, իսկ տնտեսական զարգացումն ավելացնում է այդ սպասումները բավարարելու հասարակության ունակությունը՝ այդպիսով իսկ նվազեցնելով սոցիալական անբավարարվածությունը և դրա հետևանքով առաջացող քաղաքական անկայունությունը[31]:

Այսպիսով՝ տնտեսական աճի և քաղաքական անկայունության միջև փոխկախվածությունը տատանվում է համամասնորեն տնտեսական զարգացման աստիճանի հետ: Ցածր աստիճաններում նրանց միջև կապը դրական է, միջին աստիճանում այդ կապը չի պահպանվում, իսկ բարձր աստիճաններում այդ կապը դառնում է բացասական՝[32] հրահրելով սոցիալական բողոք:

Համարելով կոռուպցիան որպես արդիականացման ուղեկից՝ Հանթինգթոնն այն դիտում է որպես արդյունավետ քաղաքական ինստիտուցիոնալացման բացակայության հետևանքներից մեկը: Որոշ հասարակություններում կոռուպցիան կարող է ունենալ ավելի լայն տարածում, քան մյուսներում: Սակայն մշակույթների մեծ մասում, այն ավելի լայն տարածում է ստանում արդիականացման ակտիվ շրջանում:

Արդիականացվող հասարակություններում կոռուպցիան ոչ թե ընդունված նորմերից վարքագծի շեղման արդյունքն է, այլ նորմերի շեղումը վարքագծի սահմանված ձևերից: Լավի և վատի մասին չափանիշները վարքագծի որոշ ավանդական ձևեր դարձնում են որպես անօրինական: Այսինքն՝ որևէ ավանդական հասարակության մեջ «լավու- թյանը պատասխանում են լավությամբ կամ շնորհակալությամբ» երևույթը կարող է դիտվել որպես կոռուպցիա:

---

[30] Хантингтон С. ..., с. 65.

[31] Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах, Прогресс-Традиция, Москва, 2004, с. 66.

[32] Хантингтон С. ..., с. 70.

Շատ հասարակություններում ավանդական ընկալումների համաձայն՝ պաշտոնյան պարտավոր է «պարգևատրել» իր ընտանիքի անդամներին և հարազատներին՝ նրանց տալով աշխատանք և այլ պաշտոններ: Այսպիսի վարքագիծը սահմանվում է որպես նեպոտիզմ, հետևապես՝ բնորոշում է այն, թե ինչ է կոռուպցիան: Այս երևույթն իր տարբեր դրսևորումներով գոյություն ունի նաև հայ հասարակության մեջ: Այսպիսով՝ կոռուպցիան հանրային բարեկեցության և մասնավոր շահի միջև հակասությունն է, ինչն իր հետ բերում է արդիականացումը:

Արդիականացումը նպաստում է կոռուպցիայի զարգացմանը նաև այն բանով, որ ստեղծում է իշխանության հարստացման համար նոր աղբյուրներ, որի վերաբերմունքը քաղաքականության նկատմամբ չի պայմանավորվում տվյալ հասարակության մեջ գերակշիռ ավանդական նորմերով, իսկ նոր նորմերը դեռևս չեն ընդունվել հասարակության մեջ գերակա խմբերի կողմից: Այս տեսանկյունից կոռուպցիան նոր ռեսուրսներով խմբերի ձևավորման արդյունքն է, որոնք ձգտում են իրենց համար ապահովել ազդեցություն քաղաքական դաշտում: Կոռուպցիան կարելի է դիտել որպես քաղաքական համակարգում նոր խմբերի հարմարեցման (ասիմիլիացիայի) ոչ ֆորմալ միջոց այն պայմաններում, երբ համակարգը ունակ չէ ադապտացվել այնքան, որ ապահովի այդ նպատակին հասնելու համար օրինական և ընդունելի միջոցներ[33]:

Այսպիսով, ինչպես նշում է Հանթինգթոնը, գոյություն ունի աղքատների և հարուստների կոռուպցիա: Մեկը քաղաքական իշխանությունը փոխում է դրամի հետ, մյուսը դրամը՝ քաղաքական իշխանության հետ: Սակայն երկու դեպքում էլ ինչ-որ հանրային բան (ձայն, պաշտոն կամ որոշում) փոխանակվում է հանուն անձնական շահի[34]:

Այս երևույթն իր բոլոր բացասական դրսևորումներով գոյություն ունի նաև հայ հասարակության մեջ: Անկախության ձեռքբերումից հետո Հայաստանում գրեթե բոլոր տեղական և համընդհանուր ընտրություններում և քվեարկություններում նկատվել են կոռուպցիոն գործարքներ: Ընտրակաշառքը դարձել է արդիականացվող Հայաստանի անբաժան ուղեկիցը: Եվ ընտրությունների նախաշեմին կարծես թե արդեն որպես

---

[33] Хантингтон С. ..., с. 77.

[34] Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах, Прогресс-Традиция, Москва, 2004, с. 77.

«մշակույթ» բացասական իմաստով ընտրողը սպասում է ընտրակաշառքին, իսկ քաղաքական ուժը գիտի, որ այդ մեխանիզմը գործուն է և, որպես կանոն, չի ունենում իրավական հետևանքներ, քանի որ և՛ կաշառք տվողը, և՛ այն վերցնողը հավասարապես համարվում են օրինախախտներ: Ուստի՝ այս երկու կողմերից ոչ մեկը չի բարձրաձայնում այդ մասին, քանի որ ինքը ևս դրա համար պետք է կրի համապատասխան պատասխանատվություն: Սակայն դա չի նշանակում, որ պետք է հարմարվել և ընդունել այս արատավոր երևույթը՝ որպես բնական: Չէ որ քաղաքական իրականության մեջ առկա արատավոր երևույթների համար չի կարելի մեղադրել, առավել ևս պատասխանատվության ենթարկել «արդիականացում» հասկացությանը, որը ենթադրում է այդ բացասական երևույթների առկայությունն անցումային կամ տրանսֆորմացիոն շրջանում: Կոռուպցիայի խնդրի լուծումը առաջնահերթ է ոչ թե իրավական կամ օրենսդրական հարթությունում, այլ գիտակցականում, քանի որ ցանկացած օրենք կամ իրավական ակտ չի կարող արդյունավետ գործել, եթե հասարակության գիտակցության մեջ բացակայում են դրանց կիրառման անհրաժեշտության նախադրյալները: Ուստի՝ արդիականացվող հասարակություններում քաղաքական կոռուպցիայի վերացման համար անհրաժեշտ է, որպեսզի քաղաքացու մոտ ձևավորվի քաղաքացիականության գիտակցություն, որը որպես գերագույն արժեք է դիտում քաղաքացուն: Միայն այս դեպքում քաղաքացին կհասկանա, որ իր ձայնը վաճառելը ոչ թե լուծում է որևէ առօրեական խնդիր, կամ դա սեփական շահի բավարարում է, այլ պայմանավորում է ապագան որոշակի ժամկետով: Իսկ քաղաքական ուժերը, որոնք սովոր են ընտրակաշառքի մեխանիզմով հավաքել քաղաքացիների ձայները, ստիպված կլինեն նրանց ձայնը վերցնել ոչ թե քաղաքացուն կաշառելու կամ գնելու միջոցով, այլ կմշակեն ավելի արդյունավետ միջոցներ, որոնք քաղաքակիրթ աշխարհում հայտնի են որպես «իրատեսական արդյունավետ ծրագրեր»:

Հետևապես՝ քաղաքացու գիտակցության բարձրացումը սկիզբ կդնի քաղաքական ուժերի ինստիտուցիոնալացման գործընթացին, ինչն արդեն հիմքեր կստեղծի քաղաքական կարգի ամրապնդման և կայունացման համար: Այսինքն՝ եթե քաղաքական ուժերը չեն ցանկանում ինստիտուցիոնալացվել, ապա քաղաքացին կարող է ստիպել նրանց անցնել այդ ճանապարհը՝ ունենալով քաղաքական գիտակցության պատշաճ մակարդակ: Ինչ վերաբերում է քաղաքացու գիտակ-

ցության մակարդակի բարձրացման խնդրին, ապա դրա ճշմարիտ և արդյունավետ ուղին ժամանակակից կրթությունն է: Իսկ այսօրվա տեղեկատվական հոսքերը, որոնք հետզհետե դառնում են ավելի մատչելի, կարող են ապահովել այդ կրթության տեղեկատվական հիմքերը: Պատահական չէ, որ այսօր մեր երկրում արդիականացման գործընթացի զգալի մասը կամա, թե ակամա ստանձնել են երիտասարդները, քանի որ քաղաքական իշխանությունն այս առումով բավական դանդաղ է առաջ ընթանում: Իսկ երիտասարդները նրանք են, ովքեր ժամանակակից կրթություն ստացողներն են և տեղեկատվական հոսքերի առաջին սպառողները:

Հանթինգթոնը իրավացիորեն նշում է, որ օգտագործելով քաղաքական ազդեցությունը՝ կարելի է ավելի շատ փող կուտակել ավելի կարճ ժամանակահատվածում: Հետևապես՝ քաղաքական դիրքի օգտագործումը որպես հարստացման միջոց, ենթադրում է քաղաքական արժեքների և ինստիտուտների ենթարկումը տնտեսականին: Քաղաքականության գլխավոր նպատակը դառնում է ոչ թե հանրային նպատակին հասնելը, այլ անհատական շահերի բավարարումը: Նույն երևույթը գոյություն ունի նաև Հայաստանում: Շատ հաճախ մարդիկ մտնում են քաղաքականության ոլորտ՝ սեփական շահերը բավարարելու և պաշտպանելու նպատակով: Ուստի՝ մեր իրականության մեջ հաճախ կարելի է նկատել մի կուսակցությունից մեկ այլ կուսակցություն մարդկանց տեղաշարժը կամ կուսակցության շարքերի լքումը՝ տվյալ պահին իշխանություն ունեցող կուսակցության անդամ դառնալու նպատակով: Այս երևույթը մեծ մասամբ տարածվում է գործարարությամբ զբաղվող քաղաքական գործիչների վրա[35]: Իսկ երբեմն էլ պաշտոնը պահելու համար կուսակցական գործիչները կարող են հրաժարվել կուսակցական տոմսից, ինչը 2014թ. տեղի ունեցավ «Օրինաց Երկիր» կուսակցությունում, երբ իշխանական կոալիցիայից դուրս գալու արդյունքում օեկական նախարարները ոչ թե հրաժարվեցին նախարարական պորտֆելներից, այլ կուսակցական տոմսերից[36]:

---

[35] Օրդուխանյան Է., Սուքիասյան Հ., Քաղաքական մշակույթի առանձնահատկությունները Հայաստանում, Լուսաբաց, Երևան, 2012, էջ 67:

[36] ՕԵԿ նախարարները դադարեցրել են անդամակցությունը կուսակցությանը, http://www.1in.am/265922.html, /16.04.2014/, ՕԵԿ նախարարները լքում են կուսակցությունը, որպեսզի պահպանեն իրենց պորտֆելները, http://operativ.am/?p=72590/, /16.04.2014/.

Որքան բարձր է քաղաքական կոռուպցիան իշխանության մեջ, այնքան ցածր է քաղաքական ինստիտուցիոնալացման աստիճանը, քանի որ հասարակության բարձր քաղաքական ինստիտուտները, որոնք պետք է լինեն անկախ արտաքին ազդեցությունից, իրականում ավելի շատ են ենթակա այդպիսի ազդեցությանը[37]:

Սակայն, եթե կոռուպցիան կապված է բնակչության քաղաքական ակտիվության աճի հետ, ապա այն նպաստում է նոր խմբերի ինտեգրմանը քաղաքական համակարգում: Այս դեպքում կոռուպցիան, համարվելով պետական կարգավորման մեխանիզմների ավելացման արդյունք, կարող է խթանել տնտեսական զարգացումը: Կոռուպցիան կարող է դառնալ ավանդական օրենքների կամ բյուրոկրատական արգելքների հաղթահարման ուղի, որն արգելակում է տնտեսական աճը[38]:

Կոռուպցիան հատկապես տարածված է այն երկրներում, որտեղ չկան արդյունավետ քաղաքական կուսակցություններ, այն հասարակություններում, որտեղ գերակշիռ դեր ունեն անհատի, ընտանիքի կամ կլանի շահերը: Արդիականացվող պետություններում որքան թույլ և ոչ ժողովրդական են քաղաքական կուսակցությունները, այնքան ավելի հավանական է կոռուպցիայի տարածումը, ինչն առկա է նաև Հայաստանում:

Յուրաքանչյուր հասարակության կայունությունը կախված է բնակչության քաղաքական ակտիվության և քաղաքական ինստիտուցիոնալացման մակարդակների միջև հարաբերակցությունից: Ցածր քաղաքական ակտիվություն ունեցող հասարակություններում քաղաքական ինստիտուցիոնալացման աստիճանը կարող է լինել ավելի ցածր, քան ավելի ակտիվ քաղաքական մասնակցություն ունեցող հասարակություններում: Հետևապես, եթե հասարակության մեջ բնակչության քաղաքական ակտիվությունը և քաղաքական ինստիտուցիոնալացումը ցածր են, ապա հասարակությունը թույլ է, իսկ հակառակ դեպքում՝ ուժեղ:

Այնտեղ, որտեղ ավանդական քաղաքական ինստիտուտները թույլ են կամ բացակայում են, կայունության պայման է դառնում գոնե մեկ քաղաքական կուսակցությունը, որն ունի ինստիտուցիոնալացման բարձր մակարդակ: Այդպիսի մեկ կուսակցություն ունեցող պետութ-

---

[37] Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах, Прогресс-Традиция, Москва, 2004, с. 84.

[38] Хантингтон С. ..., с. 85.

յուններն ավելի կայուն են, քան նրանք, որտեղ այդպիսիք չկան: Իսկ այն պետությունները, որտեղ չկան կուսակցություններ կամ կան, բայց թույլ են, ավելի անկայուն են, ինչպես Հայաստանում, որտեղ կուսակցական համակարգը դեռևս ինստիտուցիոնալացված չէ և գործում է դե ֆակտո միակուսակցական համակարգ:

Այսպիսով՝ վերը նշված խնդիրների վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ Հայաստանում քաղաքական կարգի հաստատումը դեռ երկար ճանապարհ ունի անցնելու, քանի որ արդիականացման շրջանում առկա են բազմաթիվ դժվարություններ, որոնք պետք է հաղթահարել: Դրանք հիմնականում կապված են լեգիտիմության, վստահության և քաղաքացիների ու իշխանությունների զարգացվածության համարժեքության հետ: Այսինքն՝ քաղաքացիների ավելացող պահանջներին այսօր իշխանությունները չեն կարողանում տալ համարժեք պատասխան, ինչը հանգեցնում է սոցիալական լարվածության խորացմանը, իսկ առանց տնտեսական կայունության կառավարության կողմից նախաձեռնվող բարեփոխումները համարժեք չեն ընդունվում քաղաքացիների կողմից՝ իրենց հիմքում ունենալով անվստահության բարձր աստիճան: Քաղաքական կուսակցությունները, որոնք կոչված են ներկայացնելու հասարակության տարբեր շերտերի շահերը, չեն ապահովում այդ գործառույթի իրականացումը, ինչը վկայում է դրանց ոչ ինստիտուցիոնալացվածության մասին:

Սակայն կարևոր է ընդունել, որ Հանթինգթոնի քաղաքական կարգի տեսությունը հնարավորություն է տալիս վերհանել և հասկանալ այդ դժվարությունների խորքը և արմատները՝ հիմնավորելով իր ունիվերսալությունը: Այսինքն՝ այս տեսությունը որպես գործիք կարելի է օգտագործել արդի շրջանում տարբեր երկրներում արդիականացման գործընթացները ճշմարիտ ընկալելու և գնահատելու համար, ինչը հնարավորություն կտա նաև որոնելու այդ դժվարությունների հաղթահարման ուղիներ: Այս տեսանկյունից կարելի է պնդել, որ Հայաստանում քաղաքական կարգի կայունացման և արդիականացման գործընթացի ինստիտուցիոնալացման համար անհրաժեշտ է բարձրացնել քաղաքական գիտակցությունը, որը պետք է հավասարապես նախաձեռնեն թե՛ քաղաքացիական, թե՛ իշխանական կողմերը:

СОВРЕМЕННАЯ АРМЕНИЯ В СВЕТЕ "ПОЛИТИЧЕСКОГО ПОРЯДКА" ХАНТИНГТОНА

ЭМИЛЬ ОРДУХАНЯН
Старший преподаватель кафедры по правам человека, демократии и европейских исследований при ЮНЕСКО, кандидат политических наук

Ключевые слова: политический порядок, модернизация, политические институты, легитимность, политическая партия, политическое участие, коррупция.

РЕЗЮМЕ

Современные политические развития, которые происходят в контексте постсоветской трансформации или модернизации, наполнены многими трудностями. Эти трудности, связанные с формированием демократических институтов, с их нормальным функционированием, с политической культурой участия и с другими процессами, существовали и в более ранний период демократического развития в ряде других государств. В 1960-70 годы эту проблему всесторонне исследовал американский политолог Самуэля Хантингтон, который в своем труде "Политический порядок в меняющихся обществах" разделил причины трудностей переходного процесса и предложил пути их преодоления.

В данной статье была сделана попытка рассмотреть и объяснить трудности постсоветского политического порядка и модернизации в рамках теории "политического порядка" Хантингтона. В статье предложены некоторые способы преодоления трудностей модернизации в армянском обществе.

MODERN ARMENIA IN THE LIGHT OF HUNTINGTON'S "POLITICAL ORDER"

EMIL ORDUKHANYAN
Senior lecturer at UNESCO Chair on Human Rights, Democracy and European Studies, PhD in Political Science

Key words: political order, modernization, political institutions, legitimacy, political party, political participation, and corruption.

SUMMARY

Modern political developments which take place in the context of post-Soviet transformation or modernization, are filled with many challenges. These difficulties are associated with the formation of democratic institutions, with their normal functioning, political participation, civil culture, and with other processes existing in the earlier period of democratic development in a number of other states. In 1960-70 years this problem was comprehensively researched by the American political scientist Samuel Huntington, who in his book "Political Order in Changing Societies" shared the reasons for the difficulties of the transition process and suggested ways to overcome them.

In this article, the author attempts to study and explain the difficulties of modernization in post-Soviet space in the framework of the "political order" theory of Huntington. The author also suggests some ways to overcome the difficulties of modernization in Armenian society.

Տպագրվել է՝ *Քաղաքագիտության հարցեր: Հանթինգթոնը և արդի քաղաքագիտական խոսույթը: Քաղաքագիտական հանրապետական չորրորդ գիտաժողովի նյութեր.- Եր.: Լիմուշ, 2015.- 200 էջ:*